SINCE 1994
FASTCREDIT

«ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2018թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2018թ. տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնես արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվում է «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն:

Կազմակերպության Վարչության անդամներ՝

Հակոբ Ղոնջեյան	Գործադիր տնօրեն,Վարչության նախագահ		29.04.19թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կամո Մայիլյան	Գործադիր տնօրենի տեղակալ, Վարչության անդամ		29.04.19թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Լիլիա Մովսիսյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ		29.04.19թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2018թ. ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ակտիվները կազմել են 30 մլրդ ՀՀ դրամ՝ 2018թ.-ի ընթացքում աճելով 5,4 մլրդ դրամով կամ 22%-ով:

Կազմակերպության ակտիվների գերակշիռ մասը բաժին է ընկնում հաճախորդներին տրամադրված վարկերին՝ 31.12.18թ.-ի դրությամբ կազմելով ակտիվների 92%-ը:

Կազմակերպության վարկային պորտֆելը 2018թ.-ի ընթացքում աճել է 5 մլրդ ՀՀ դրամով կամ 22%-ով՝ 31.12.18թ.-ին կազմելով 27,6 մլրդ ՀՀ դրամ: Կազմակերպության ընդհանուր պորտֆելում ՀՀ դրամով վարկերի տեսակարար կշիռը բավականին բարձր է, սակայն 2018թ.-ի ընթացքում այն փոքր-ինչ նվազել է: Այսպես՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Կազմակերպության կողմից ՀՀ դրամով տրամադրված վարկերի կշիռը ընդհանուր պորտֆելում կազմել է մոտ 78%:

Կազմակերպության դրամական միջոցները (կանխիկ դրամական միջոցներ, մնացորդներ բանկերում) 31.12.18թ.-ի դրությամբ կազմել են 1,8 մլրդ ՀՀ դրամ, որը կազմում է Կազմակերպության ընդհանուր ակտիվների 5,9%-ը:

Ակտիվների աճին զուգընթաց երկրորդ կիսամյակի ընթացքում 18,7%-ով աճել են նաև Կազմակերպության պարտավորությունները՝ 31.12.18թ.-ին կազմելով 25,3 մլրդ ՀՀ դրամ:

2018թ.-ի երկրորդ կիսամյակի ընթացքում շարունակաբար աճել են ներգրավված փոխառությունները և ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը: Այսպես՝ 31.12.18թ.-ի դրությամբ նշված փոխառությունները և վարկերը կազմել են 24,2 մլրդ ՀՀ դրամ՝ միջանկյալ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում աճելով 16,8%-ով:

31.12.2018թ.-ի դրությամբ Կազմակերպության կողմից թողարկված պարտատոմսերի պորտֆելը կազմել է 1 մլն ԱՄՆ դոլար և 100 մլն ՀՀ դրամ:

31.12.18թ.-ի դրությամբ Կազմակերպության կապիտալը կազմել է 4,6 մլրդ ՀՀ դրամ՝ 31.12.17թ.-ի համեմատ աճելով 1,4 մլրդ ՀՀ դրամով, որը հիմնականում պայմանավորված է եղել հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ձևավորված շահույթով:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Կազմակերպության զուտ տոկոսային եկամուտները դիտարկվող ժամանակահատվածի համար կազմել են 4,1 մլրդ ՀՀ դրամ:

Կազմակերպության գործառնական եկամուտները 2018թ.-ի ընթացքում գրեթե չեն փոփոխվել 2017թ.-ի համեմատ ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում կազմելով 6,7 մլրդ ՀՀ դրամ: Գործառնական ծախսերը 2018թ.-ին կազմել են 2,3 մլրդ ՀՀ դրամ:

31.12.18թ.-ի դրությամբ չաշխատող վարկերը (համաձայն ՀՀ ԿԲ ստանդարտների հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասերով դասակարված վարկեր) կազմել են Կազմակերպության վարկային պորտֆելի 18,7%՝ նախորդ տարվա համեմատ բարելավվելով ցուցանիշը 2,5%-ով:

Արդյունքում, 2018թ.-ին Կազմակերպությունը ունեցել է շուրջ 1,4 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ: Կազմակերպության ակտիվների շահութաբերությունը 2018թ.-ի վերջի դրությամբ կազմել է 4,7%, իսկ կապիտալի շահութաբերությունը՝ 30.4%:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում շարունակել է աճել Կազմակերպության աշխատակիցների քանակը՝ 31.12.2018թ.-ի դրությամբ հասնելով 460-ի, որը 8,2%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

Կազմակերպությունը իր աշխատակիցների համար կազմակերպում է անգլերենի անվճար դասընթացներ, յուրաքանչյուր ստորաբաժանումում ունի վերապատրաստման պատասխանատու, ով կազմակերպում է վերապատրաստումներ տվյալ ստորաբաժանման համար: Կազմակերպությունն օգտվում է նաև ինստիտուցիոնալ վերապատրաստում իրականացնող ընկերությունների ծառայություններից: Կազմակերպությունում գործում է Խորհրդի կողմից հաստատված վարձատրության հաշվարկման և վճարման կարգը, որը՝ ըստ ստորաբաժանման, յուրաքանչյուր հաստիքի համար նախատեսում է լրավճար, պարգևավճար և հաստիքավճար: Ավելին, Կազմակերպությունում նախատեսվում է տարին մեկ անգամ աշխատավարձի վերանայում:

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԴԻՐՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2018թ.-ի ընթացքում վարկային կազմակերպությունների հիմնական ֆինանսական ցուցանիշները շարունակել են իրենց դրական դինամիկան՝ արձանագրելով ակտիվների 17.2%, պարտավորությունների 20.6% և կապիտալի 14.4% աճ 2017թ.-ի համեմատ: Մինչդեռ, նույն ժամանակահատվածում, Կազմակերպության ակտիվները, վարկային ներդրումները և կապիտալը աճել են համապատասխանաբար 22%, 22% և 44%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում վարկային կազմակերպությունների զուտ շահույթը հարկումից հետո կազմել է 54.9 մլրդ ՀՀ դրամ, ինչը 3,6 մլրդ ՀՀ դրամով ավելի է 2017թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշից: 2018թ.-ի տվյալներով ՀՀ վարկային կազմակերպությունների ակտիվների շահութաբերությունը կազմել է 9,8%, իսկ կապիտալի շահութաբերությունը՝ 18,7%, իսկ նույն ժամանակահատվածում Կազմակերպության ակտիվների շահութաբերությունը 2018թ.-ի վերջին կազմել է 4,7%, իսկ կապիտալի շահութաբերությունը՝ 30.4%:

Ստորև ներկայացված են Կազմակերպության հիմնական մրցակցային առավելությունները՝

- ✓ Տոկոսային և ոչ տոկոսային բարձր եկամուտների գեներացման կարողություններ (արտահայտված տոկոսային մարժայով, ինչպես նաև գործառնական եկամուտներ/ակտիվներ հարաբերակցությամբ): Կազմակերպության տոկոսային մարժան հաշվետու տարվա տվյալներով կազմել է 13.2%: Հաշվետու ժամանակահատվածի համար գործառնական եկամուտներ/ակտիվներ հարաբերակցությունը կազմել է 22%՝ կրկին արձանագրելով բարձր մակարդակ:
- ✓ Տրամադրված վարկերի և ներգրավված փոխառությունների դոլարիզացիայի ցածր մակարդակ: Չնայած նրան, որ Հայաստանում դոլարիզացիայի մակարդակը 2018թ.-ի ընթացքում շարունակել է նվազել, այնուամենայնիվ այն շարունակում է մնալ բարձր: Մինչդեռ, 31.12.2018թ.-ի դրությամբ Կազմակերպության կողմից արտարժույթով տրամադրված վարկերի կշիռը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի ընդամենը 22%, իսկ արտարժութային պարտավորությունները՝ ընդհանուր պարտավորությունների՝ 30%-ը:
- ✓ Կապիտալիզացիայի բավականին բարձր մակարդակ: 31.12.18թ.-ի դրությամբ Կազմակերպության կապիտալի համարժեքության ցուցանիշը կազմել է 14,5%:

ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Առաջիկա տարիների համար Կազմակերպությունը կանխատեսում է ապահովել կայուն աճ իր հիմնական ֆինանսական ցուցանիշների գծով: Կազմակերպությունը վարկավորումը կթիրախավորի չորս հիմնական

ուղղություններով՝ Մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ, Գյուղատնտեսական և Հիփոթեք:

Ակտիվների աճը կզուգակցվի վարկային պորտֆելի շարունական աճով: Ունենալով ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային ռեսուրսների զգալի պաշար՝ Կազմակերպությունը շարունակելու է ակտիվ վարկավորումը: Կազմակերպությունը սկսել է ծրագրային վարկերի տրամադրում «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի հիփոթեքային վարկավորման ծրագրի շրջանակներում, ինչպես նաև Կազմակերպությունը իր սեփական միջոցներով կշարունակի վարկավորումը: Առաջին հաջողված փորձից հետո 2019թ.-ի ընթացքում Կազմակերպությունը կրկին պլանավորում է թողարկել դոլարային և դրամային պարտատոմսեր, ինչը նույնպես կխթանի վարկավորման գործընթացին:

Միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետազոտությունների արդյունքները հանգում են այն եզրակացությանը, որ առաջիկա տարիների ընթացքում նորագույն տեխնոլոգիաների արագ զարգացումը, դեմոգրաֆիկ փոփոխությունները, հաճախորդների նոր տեսակի պահանջմունքների ձևավորումը և կարգավորող մարմինների վերահսկողական պահանջների խստացումը բանկային համակարգը կենթարկի լուրջ փոփոխությունների:

Վերոնշյալ գործոնները էական ազդեցություն կունենան նաև հայաստանյան ֆինանսական շուկայի վրա: Սույն գործոններով պայմանավորված՝ մարտահրավերներին դիմակայելու և դրանց շնորհիվ մրցակցային առավելություն ստանալու համար Կազմակերպության կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները՝

- ✓ Սպասարկման ցանցի ընդլայնում, սպասարկման գործընթացի օպտիմալացում և հեռահար սպասարկման հնարավորությունների ավելացում: Սպասարկման ցանցի ընդլայնումը պայմանավորված կլինի մասնաճյուղային ցանցի ավելացմամբ՝ հաճախորդներին առաջարկվող ծառայություններից օգտվելու հասանելիության և հարմարավետության բարձրացման նպատակով: Նշված փոփոխությունները կբարձրացնեն Կազմակերպության գործունեության արդյունավետությունը և կբարելավեն հաճախորդների կողմից մեր ծառայություններից օգտվելու հարմարավետությունը: Այժմ Կազմակերպությունը ունի 21 մասնաճյուղ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում:
- ✓ FC Bank բջջային հավելվածի ֆունկցիոնալության ավելացում և կատարելագործում, ինչը հնարավորություն կընձեռի մեր հաճախորդներին ավելի հեշտ ընկալել մեր կողմից առաջարկվող ծառայությունները և ավելի հաճախ օգտվել դրանցից (User friendly):
- ✓ Ավելի հաճախորդակենտրոն բիզնես մոդելի ձևավորում (Client Oriented), որը ենթադրում է հաճախորդների հետ հաղորդակցման գործընթացի բարելավում, ինչպես նաև ֆինանսաբանկային շուկայի ծառայությունների և սպասարկման նկատմամբ հաճախորդների կարիքների ավելի խորը ուսումնասիրություն և այդ կարիքներին բավարարող թիրախային լուծումների առաջարկում: Այս

փոփոխությունների արդյունքում ակնկալվում է ստանալ հաճախորդների կողմից բարձրացված խնդիրներին ավելի արագ արձագանքում, հետադարձ կապի ուժեղացում, արդյունքում նպատակադրվելով մշտապես բարձրացնելու լոյալ հաճախորդների քանակը:

ՌԻՍԿԵՐԻ ԱՄՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Կազմակերպության ռիսկով կշռված ակտիվների գերակշիռ մասի աղբյուր է հանդիսանում վարկային ռիսկը, ինչը պայմանավորված է գործունեության հիմնական ուղղվածությամբ:

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Կազմակերպության խնդրահարույց վարկերի (համաձայն ՀՀ ԿԲ ստանդարտների հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասերով դասակարգված վարկեր) ցուցանիշը 2018թ. վերջի դրությամբ կազմել է 18,7%: Հարկ է նշել, որ Կազմակերպությանը հաջողվել է հետևողական քաղաքականության արդյունքում բարելավել վարկային պորտֆելի որակը՝ չաշխատող ակտիվների ցուցանիշը կրճատելով 2,5%-ով նախորդ տարվա համեմատ:

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումների մակարդակն ըստ տնտեսության ճյուղերի և խոշորագույն հաճախորդների գտնվել է սահմանված նպատակակետերի շրջաններում:

Կազմակերպության վարկային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի բարձրացումը: Շարունակվում են համապատասխան միջոցառումներ իրականացվել վարկերի տրամադրման որոշումների կայացման ավտոմատացված համակարգերի ստեղծման և վարկունակության գնահատման ներքին սքորինգային համակարգերի բարելավման ուղղությամբ:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿ

Շուկայական ռիսկի հայեցակարգում հիմնական ռիսկի աղբյուրներն են արտարժութային փոխարժեքների և տոկոսադրույքների տատանողականությունը: 2018թ.-ի ընթացքում ՀՀ ԿԲ-ն անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ պահպանելով դրամավարկային քաղաքականության խթանող ուղղվածությունը: Շուկայական տոկոսադրույքները դրսևորել են նվազման միտում, ինչը պայմանավորված է եղել նաև ՀՀ բանկային համակարգում ավելցուկային

իրացվելիության առկայությամբ, ինչպես նաև հաճախորդների ներգրավման ուղղությամբ մրցակցության բարձր տեմպերով:

Արտարժութային շուկայում ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքն ունեցել է կայուն միտում՝ դրսևորելով ցածր տատանողականություն, ի տարբերություն այլ արտարժույթների, մասնավորապես ՌԴ ռուբլու, որը դրսևորել է առավել բարձր տատանողականություն՝ պայմանավորված ԱՄՆ պատժամիջոցների ազդեցությամբ և նավթի գների տատանողականությամբ:

Ավելորդ ռիսկերից խուսափելու նպատակով՝ եվրո և ՌԴ ռուբլի արտարժույթներով դիրքերը հիմնականում պահվել են փոքր: ԱՄՆ դոլարով արտահայտված դիրքը եղել է բաց, սակայն կառավարելի մակարդակում: 2018թ.-ի ընթացքում ընդհանուր առմամբ արտարժույթի վերագնահատումից գրանցվել է օգուտ, սակայն պարբերաբար իրականացվող սթրեսային սցենարների արդյունքում արտարժույթի վերագնահատումից հնարավոր կորուստները չեն գերազանցել սահմանված ռիսկերի չափերը:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Կազմակերպությունում գործում է գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, որի հիմնական բաղադրիչներից մեկն է հանդիսանում մշտական հսկողության համակարգը: Կազմակերպությունը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիթորինգի և դրանց հակազդման միջոցով:

Ներքին հսկողության համակարգը Կազմակերպության գործունեության բոլոր ոլորտների և գործընթացների նկատմամբ հսկողության ապահովումն է:

Կազմակերպությունում ներկայումս ներդրված է արդյունավետ, միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ, որն ամրագրված է Կազմակերպության ներքին իրավական ակտերով:

Ավելին, Կազմակերպությունում գործում են Ներքին աուդիտի, Անձնակազմի հսկողության ստորաբաժանումներ, որոնք նպաստում են ներքին հսկողության արդյունավետության բարձրացմանը:

Ներքին աուդիտի ստորաբաժանման խնդիրն է բացահայտել Կազմակերպության նպատակների իրագործմանը խոչընդոտող հնարավոր ռիսկերի բացահայտումը և ներքին հսկողության համակարգի բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Անձնակազմի հսկողության բաժնի խնդիրն է Կազմակերպությունում հետևել անձնակազմի արտաքին տեսքին, կարգապահությանը և հաճախորդների հետ ճիշտ

աշխատանքին: Կազմակերպությունում նաև 24 ժամ գործում է Տեխնիկական աջակցման բաժինը, որը հսկում է ներքին ծրագրերի անխափան աշխատանքը:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

2018թ.-ի ընթացքում ՀՀ բանկային համակարգում առկա է եղել իրացվելիության բարձր մակարդակ: «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ՈՒՎԿ ՓԲԸ նույնպես ապահովում է իրացվելիության բարձր և հուսալի մակարդակ, ինչը պայմանավորված է մի քանի գործոններով: Առաջին գործոնն այն է, որ Կազմակերպության պարտավորությունները հիմանականում միջնաժամկետ և երկարաժամկետ են, որոնք տեղաբաշխված են կարճաժամկետ և արագ իրացվելի թանկարժեք իրերի գրավով վարկերի տեսքով: Բացի այդ՝ տարիների փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ սեփականատերերից ներգրավված փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսները նույնպես վերաձևակերպվել են փոխառության, ուստի քիչ հավանական է համարվում դրանց վաղաժամկետ մարումը: Չնայած երկրորդ կիսամյակում ՀՀ քաղաքական անկայուն վիճակին և անորոշությանը՝ Կազմակերպությանը հաջողվել է պահպանել իրացվելիության բարձր մակարդակը իրավաբանական անձանցից ներգրավված միջոցների աճի և պարտատոմսերի տեղաբաշխման հաշվին: Նշված հանգամանքը վկայում է Կազմակերպության նկատմամբ հաճախորդների բարձր վստահության մասին:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2018թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 3

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն 5

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն 6

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն 8

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն 9

Ծանոթագրություն 1 11

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության («Ընկերություն») ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված Ընկերության 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա Ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին՝ համաձայն Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններ և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2019թ. ապրիլի 12-ի մեր եզրակացությունում:

Grant Thornton

Եզրակացությունը պարունակում է նաև Աուդիտի առանցքային հարցեր, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը վերաբերվում են ՖՀՄՍ 9-ի առաջին անգամ կիրառմանը, համաձայն այդ ստանդարտի ֆինանսական ակտիվների դասակարգմանը և արժեզրկումից կորուստների հաշվառմանը: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտ անցած ամփոփ ֆինանսական հաշվետվությունների՝ ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքների համաձայն պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» ստանդարտին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա՝ արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569 «ГРАНТ ТОРНТОН»

12 ապրիլի 2019թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2018թ.	2017թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6,382,862	6,002,978
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(2,332,905)	(1,955,434)
Զուտ տոկոսային եկամուտներ	4,049,957	4,047,544
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	243	706
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(23,257)	(7,425)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	(23,014)	(6,719)
Արտարժութային գործառնություններից զուտ եկամուտ	196,014	144,425
Այլ եկամուտներ	97,561	226,666
Արժեզրկման գծով ծախսեր	(331,019)	73,068
Անձնակազմի գծով ծախսեր	(1,498,746)	(1,396,709)
Հիմնական միջոցների մաշվածություն	(125,533)	(91,056)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(18,656)	(3,833)
Այլ ծախսեր	(508,461)	(469,866)
Շահույթ մինչև հարկումը	1,838,103	2,523,520
Շահութահարկի գծով ծախս	(356,781)	(513,302)
Տարվա շահույթ	1,481,322	2,010,218
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	1,481,322	2,010,218

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Ակտիվներ		
Դրամական միջոցներ	1,784,782	1,389,657
Հաճախորդներին տրված վարկեր	27,621,788	22,641,666
Հիմնական միջոցներ	335,576	359,721
Ոչ նյութական ակտիվներ	30,416	31,437
Հետաձգված հարկային ակտիվ	47,126	-
Այլ ակտիվներ	188,710	163,143
Ընդամենը՝ ակտիվներ	30,008,398	24,585,624
Պարտավորություններ և սեփական կապիտալ		
Պարտավորություններ		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,541,195	4,539,471
Վարկեր և փոխառություններ	18,694,544	16,210,959
Թողարկված պարտքային արժեթղթեր	603,387	-
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	250,918	367,278
Հետաձգված հարկային պարտավորություն	-	12,333
Այլ պարտավորություններ	275,108	233,529
Ընդամենը՝ պարտավորություններ	25,365,152	21,363,570

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	3,000,000	2,000,000
Գլխավոր պահուստ	308,755	259,755
Չբաշխված շահույթ	1,334,491	962,299
Ընդամենը՝ սեփական կապիտալ	4,643,246	3,222,054
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ	30,008,398	24,585,624

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Ընկերության գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից 2019թ. ապրիլի 12-ին

Հակոբ Ղոնջեյան
Գործադիր տնօրեն

Լիլիա Մովսիսյան
Գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնետի- րական կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,000,000	259,755	962,299	3,222,054
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը			(150,130)	(150,130)
Վերահաշվարկված հաշվեկշիռը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	2,000,000	259,755	812,169	3,071,924
Տարվա շահույթ	-	-	1,481,322	1,481,322
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	1,481,322	1,481,322
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,000,000	-	-	1,000,000
Հատկացում պահուստին	-	49,000	(49,000)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(910,000)	(910,000)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	1,000,000	49,000	(959,000)	90,000
Հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,000,000	308,755	1,334,491	4,643,246
Հաշվեկշիռը 2017թ. հունվար 1-ի դրությամբ	2,000,000	90,348	2,333,230	4,423,578
Տարվա շահույթ	-	-	2,010,218	2,010,218
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	2,010,218	2,010,218
Հատկացում պահուստին	-	169,407	(169,407)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	(3,211,742)	(3,211,742)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	169,407	(3,381,149)	(3,211,742)
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,000,000	259,755	962,299	3,222,054

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2018	2017
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	1,838,103	2,523,520
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	144,189	94,889
Հնարավոր կորուստների արժեզրկման ծախս/(փոխհատուցում)	331,019	(73,068)
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժութային վերագնահատումից զուտ (օգուտ)/վնաս	13,710	(23,234)
Ստացվելիք տոկոսներ	(47,323)	19,687
Վճարվելիք տոկոսներ	222,075	189,623
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	2,501,773	2,731,417
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Հաճախորդներին տրված վարկեր	(5,451,937)	(4,470,233)
Այլ ակտիվներ	(23,273)	5,215
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Այլ պարտավորություններ	41,574	70,740
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեության համար օգտագործված մինչև շահութահարկը	(2,931,863)	(1,662,861)
Վճարված շահութահարկ	(495,068)	(401,536)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(3,426,931)	(2,064,397)

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2018թ.	2017թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների առք	(102,222)	(158,661)
Ոչ նյութական ակտիվների առք	(17,635)	(4,486)
Հիմնական միջոցների վաճառք	834	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(119,023)	(163,147)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	1,016,786	1,673,234
Վարկեր և Փոխառություններ	2,292,294	4,328,188
Պարտքային արժեթղթերի թողարկում	580,657	-
Բաժնետիրական կապիտալի թողարկում	1,000,000	-
Շահաբաժիններ բաժնետերերին	(910,000)	(3,211,742)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	3,979,737	2,789,680
Դրամական միջոցների զուտ աճ	433,783	562,136
Դրամական միջոցներ տարվա սկզբի դրությամբ	1,389,657	820,777
Դրամական միջոցների գծով ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը	(197)	-
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների վրա	(38,461)	6,744
Դրամական միջոցներ տարվա վերջի դրությամբ	1,784,782	1,389,657

Լրացուցիչ տեղեկատվություն՝

Ստացված տոկոսներ	6,335,539	6,022,665
Վճարված տոկոսներ	(2,130,442)	(1,765,811)

Ծանոթագրություն 1

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունները, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը՝ քաղված «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից, պատրաստված են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտ անցած ամբողջական ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը՝ կից ծանոթագրություններով, հասանելի է «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության պաշտոնական կայքում: